ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2025 թվականի № ----Ա

«ՀԱՈՒՋ ՆԵԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգի 6-րդ կետի համաձայն՝ Որոշման №5 հավելվածով սահմանված ձևին համապատասխան հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) Հանձնաժողով է ներկայացվում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 25-ը,

բ) «ՀԱՈՒՋ ՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2024 թվականի Հաշվետվությունը Հանձնաժողով է ներկայացրել 2025 թվականի հունիսի 25-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո,

գ) Որոշմամբ սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովը Ընկերության նկատմամբ 2025 թվականի հուլիսի 15-ին հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 15-ի №ՄՄ/34.2-Մ2-7/3427-2025 գրությամբ,

դ) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ հայտնել է, որ տեխնիկական խնդրի պատճառով հնարավոր չի եղել ուղարկել համապատասխան հաշվետվությունը,

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հաշվետվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջը, իսկ ինչ վերաբերում է Հաշվետվությունը սահմանված ժամկետում ներկայացնելուն խանգարող

հանգամանքների վերաբերյալ Ընկերության դիտարկմանը, ապա Ընկերության ներկայացրած փաստաթղթով չի հիմնավորվել, որ նշված պարտավորության չկատարումը հետևանք է ֆորս մաժորի, այն է՝ առկա են եղել անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են իր կամքից անկախ, խոչընդոտել են իր գործունեությանը կամ հանգեցրել համապատասխան պարտավորությունների չկատարմանը՝ հակառակ իր գործադրած ջանքերի, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Ընդ որում, Ընկերությունը դրա վերաբերյալ հնարավորինս սեղմ ժամկետում չի տեղեկացրել Հանձնաժողովին,

զ) Ընկերությունը մինչև 2024 թվականի հուլիսի 30-ը պետք է Հանձնաժողով ներկայացներ Որոշման №2 և №6 հավելվածներով սահմանված ձևերին համապատասխան հաշվետվությունները, սակայն, ներկայացրել է 2024 թվականի օգոստոսի 5-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո, որի արդյունքում Հանձնաժողովն իր 2024 թվականի դեկտեմբերի 4-ի №392-Ա որոշմամբ, որն օրինական ուժի մեջ է մտել 2024 թվականի դեկտեմբերի 13-ին և անբողոքարկելի է դարձել 2025 թվականի փետրվարի 14-ին, նախազգուշացրել է Ընկերությանը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջների խախտման համար Ընկերությանը տուգանել 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը պարտավորեցնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով սահմանված գումարը №900005242319 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում

որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2025թ.